ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԵՌԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ԴԻՎԱՆԱՏԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ դիվանատան նորակառույց շենքի օրհնության և բացման արարողությունը:

Դիվանատան նոր շենքը կառուցվել է ազգային բարերարներ տեր և տիկին Նազար և Արտեմիս Նազարյանների հովանավորությամբ: Շենքի ճարտարապետն է ամերիկաբնակ Արմանդ Ավագյանը, շինարարական աշխատանքները կատարել է «Հորիզոն-95» շինարարական կազմակերպությունը:

Այս ուրախալի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց ամենքին՝ իր օրհնությունը և գնահատանքը բերելով շենքի բարերարներին, կառուցողներին և մասնավորապես դիվանատան աշխատակիցներին, ովքեր նոր շենքային պայմաններում պիտի շարունակեն իրենց անսակարկ ծառայությունը բերել մեր ազգին, Հայրենիքին և Եկեղեցուն: Դիվանատան նորակառույց այս շենքում գործելու են կաթողիկոսական գրասենյակը, առանձին բաժիններ, որոնք համակարգելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարաբերությունները Հայ Եկեղեցու թեմերի, զանազան պետական հաստատությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ու կառույցների հետ:

«*Մենք լիահույս ենք, որ այս դիվանատան գործունեությամբ իրապես նոր առաջընթաց պիտի արձանագրվի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության մեջ, և այդ աշխատանքը հոգևոր ուրախությամբ և միխիթարությամբ պիտի լցնի ամենքիս հոգիները*»,- նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

Այնուհետև, ի գնահատություն «Հորիզոն-95» շինարարական կազմակերպության՝ Մայր Աթոռում կատարած նախանձախնդիր աշխատանքի, կազմակերպության տնօրեն տիար Գագիկ Գալստյանը Նորին Սրբության կողմից պարգևատրվեց Հայոց Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

Արարողության ավարտին ներկաները շրջեցին շենքի հարկաբաժիններով, ծանոթացան Դիվանատան աշխատանքային պայմաններին:

Բացման արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԻՎԱՆԱՏԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԸ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԻՎԱՆԼԱՆ ՇՐՋԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԳԱՂԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՏՐՈՒՄ Է ՍՈՒՏՔԻ ԺԱՊԱՎԵՆԸ
ԵՎ ՆԵՐՍՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔՍՆՇՄԱՆ